

դերակատարությամբ:

Հաճախ, երբ խոսքը վերաբերում է օտարազգի անհատների պատմակերտ դերին, մենք շատ հանգիստ, առանց որևէ առարկության ընդունում ենք դա իբրև ճշմարտություն, իսկ երբ խոսքը գնում է մեր մեծերի մասին, փորձում ենք նսեմացնել նրանց դերը: Կարիք չկա խուսափել նրանց արժևորելուց. դա անհեթեթ է և վնասակար: Դա հավասարազոր է ճշմարտությունը միտումնավոր կերպով անտեսելուն, պատմության՝ մեզ այնքան անհրաժեշտ դասերը մերժելուն, հաջողություն ապահոված գործունեության մեթոդներից հրաժարվելուն:

1. Անհատը՝ դարաշրջանի իրադարձությունների հորձանուտում

Ինչ ռազմաքաղաքական իրավիճակում էր գտնվում հայ ժողովուրդը 1917–1918 թթ. սահմանագծին, երբ իբրև Թիֆլիսի Հայոց Կենտրոնական Ազգային, Հայ զինվորական և Արևմտահայ Ապահովության խորհուրդների լիազոր ներկայացուցիչ՝ Արամը սկսեց իր գործունեությունը Երևանում:

1917 թ. ռուսական հեղափոխությունների հետևանքով Կովկասյան ռազմաճակատի քայքայումը թուրքական ներխուժման սպառնալիքի տակ էին դրել ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Անդրկովկասը: Այդ ներխուժումը հանգեցնելու էր հայոց նոր ցեղասպանության, քանզի հայ ժողովուրդն իր բնօրրանում դեռևս չունէր ոչ միայն կազմակերպված գինուժ, այլև իշխանության գործող կառույցներ, որոնք ձեռնամուխ կլինեին հայկական գործի ստեղծմանը, հարյուր հազարավոր հայ փախստականների խնդիրների կարգավորմանը, պարենային ձգնաժամի հաղթահարմանը և բազմաթիվ այլ կենսական խնդիրների լուծմանը: Արևելյան Հայաստանի նշանակալի մասն ընդգրկող Երևանի նահանգում իշխանության բարձրագույն մարմին հանդիսացող Երևանի Հայոց Ազգային խորհուրդը, որը կազմվել էր Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի օրինակով, թեև գիտակցում էր դրության ծանրությունը, այնուամենայնիվ, իր անելիքի մասին հստակ պատկերացում չունէր: Ս. Վրացյանի բնորոշմամբ՝ այն «անգույն և անջիղ մի մարմին էր, որ գնում էր դեպքերի հոսանքի հետևից»²:

Արդեն այն հանգամանքը, որ հայոց համար բախտորոշ այդ իրավիճակում հայ իրականության ղեկավար և ազդեցիկ կառույցների կողմից Արամին վստահվեց Արևելյան Հայաստանի նշանակալի մասն ընդգրկող Երևանի նահանգի ղեկավարումը, նրան որոշակիորեն առանձնացնում և բարձրացնում էր մյուս գործիչներից: Սակայն, դա նրա մեծությունն ընդգծող ընդամենն առաջին պահն էր:

Արամի անհատականությունը բնորոշող, պատմակերտ դերը պայմանավորող ամենակարևոր կողմը, թերևս, նրա անվերապահ նվիրվածությունն էր հայ ժողովրդի ազատագրության և անկախության գաղափարին: Այդ գաղափարն իրականություն դարձնելու համար նա մշտապես ցուցաբերել էր անհողողող կամք, նպատակապահություն, զարմանալի շրջահայացություն ու բացառիկ հետևողականություն: Չեղավ մի պահ, որ Արամն ինչ–որ կերպ շեղվեր այդ վեհ գաղափարի իրագործումից:

Հաջորդ կարևոր գիծը, իսկ ավելի ձիշտ՝ գծերի ամբողջությունը, Արամի ստաժողության և գործունեության մասշտաբայությունն էր, բացառիկ շրջահայացությունը, հեռատեսությունը, իր ժամանակից առաջ ընկնելու և իրադարձությունների ընթացքը կանխատեսելու ունակությունը: Այդ որակները մենք տեսել ենք դեռևս Վանի 1915 թ. ապրիլյան հերոսամարտի և համանուն նահանգապետության ժամանակաշրջանում³: Բայց դրանք ակնառու դարձան հատկապես 1918 թ. Երևանում:

1917 թ. դեկտեմբերի 18–ին Երևան ժամանած Արամը, ձիշտ գնահատելով հայ ժողովրդի համար իրադարձությունների զարգացման վտանգավոր ընթացքը,

2 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 125: [Vracyan S., Hayastani Hanrapetut'yun, Er., 1993, p. 125].

3 Տե՛ս Ասրյան Ա., նշվ. աշխ., էջ 105–143: [Asryan A., Op. cit., pp. 105–143].

առանց վայրկյան իսկ հապաղելու, առաջադրեց Հայրենիքի պաշտպանությանն ու ազատությանը միտված պարզ և իրատեսական ուղեգիծ. «Ամէն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթէ նայող կայ, նայում է միայն յանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար: Եթէ ընդհանուր ուժերով ճակատ պահելու խօսք էլ է լինում, դա լոկ խօսք է՝ գուրկ իրական հիմքից ու անկեղծությունից: Հայերով ոչ ոք չի հետաքրքրում, շոշափելի օգնություն հասցնելու մտքով: Դրա հակառակը, կայ դաւադրական վերաբերմունք: Մենակ ենք և պէտք է ապավինենք միայն մեր ուժերին՝ թէ՛ ճակատը պաշտպանելու և թէ՛ երկրի ներսը կարգ հաստատելու համար»⁴:

Այս ձևակերպումներում ցայտուն կերպով երևում է Արամի անհատականությունը բնորոշող գծերից ևս մեկը, այն է՝ զերծ մնալ օտարի աջակցության ակնկալիքից, ինչպես նաև անհասկանալի, բարդ ծրագրերից ու ձևակերպումներից, առաջադրել հստակ և ընդհանուրի համար հասկանալի խնդիրներ:

Ունենալով այնպիսի որակներ, ինչպիսիք են ողջախոհությունն ու հետևողականությունը, վճռակալությունն ու անսասան կամքը, Արամը Երևան ժամանելուն պես, օգտագործելով Վանի նահանգապետության շրջանի իր գործունեության փորձը, առաջադրեց գործողությունների խիստ որոշակի, ժամանակային հեռավորությունից վստահորեն կարելի է ասել՝ աշխատող ծրագիր և, հետևողականորեն, քայլ առ քայլ կենսագործեց այն:

Հստակորեն ըմբռնելով, որ հայությունը մենակ է մնացել և պետք է հույսը դնի բացառապես իր ուժերի վրա՝ Արամն առաջին հերթին ամեն ինչ արեց իշխանության մարմինների և հասարակության քաղաքական գիտակցության մեջ սեփական ուժերին հավատալու և ապավինելու գաղափարն ամրապնդելու, թշնամու դեմ համագրային դիմադրություն կազմակերպելու համար:

Առաջին հերթին անհրաժեշտ էր ձևավորել իշխանության գործող մարմիններ: Արամը, որն արդեն իսկ ուներ պետական գործունեության որոշակի փորձ, գիտակցելով, որ միայն բարի կամքն ու ցանկությունները, հոգեցունց կոչերը, ինչպես նաև մեկ մարդու կամ մի խումբ մարդկանց ուժերը բավարար չեն հայության առջև ծառայած հսկայածավալ խնդիրները լուծելու համար, և որ դրանց կարելի է հասնել միայն լավ կազմակերպված և համակարգված աշխատանքի միջոցով, անմիջապես ձեռնամուխ եղավ Երևանի նահանգի իշխանության իրապես գործող մարմինների ստեղծմանը, ինչպես նաև արդեն իսկ գոյություն ունեցող, սակայն ամլության մատնված մարմիններին շունչ տալու դժվարին գործին: Արամի գործունեության այս փուլը, փաստորեն, իրենից ներկայացնում է նախ և առաջ պետականության ինստիտուտների ձևավորմանը միտված փուլ: Կարելի է ասել, որ արդեն այս շրջանից Արամը ձեռնամուխ եղավ պետականաշինության գործին՝ դնելով Հայաստանի առաջին Հանրապետության հիմքերը:

Արամի առաջարկությամբ ստեղծվեց Երևանի նահանգի իշխանության նոր մարմին՝ Երևանի Հայոց Ազգային խորհրդին հավասար իրավունքներով օժտված **Հատուկ կոմիտե**, որի առաջ դրվեցին հստակ, իրականությունից և ժողովրդի կենսական շահերից բխող խնդիրներ: Բացի այդ, նա շունչ տրվեց արդեն իսկ գոյություն ունեցող, բայց փաստացիորեն անգործության մատնված՝ ներքին գործերի Երևանի նահանգային և տեղական՝ գավառային և գյուղական մարմիններին: Արամին բնորոշ մեկ այլ հատկանիշի՝ կուսակցական բաժանումները մերժող մոտեցման շնորհիվ՝ Երևանի Հայոց Ազգային խորհրդի և Հատուկ կոմիտեի շուրջը համախմբվեցին և անդուլ աշխատանքի լծվեցին ամենքը՝ անկախ կուսակցական պատկանելությունից և գաղափարական համոզումներից:

Զուգահեռաբար՝ հետևողական և եռանդուն աշխատանք տարվեց հաջորդ կարևորագույն խնդրի՝ հայկական կանոնավոր բանակի ստեղծման ուղղությամբ:

4 Մեջբերումը ըստ՝ **Աստուածատրեան Ա.**, Արամը, «Հայրենիք», Բոստոն, 1964, N 4, էջ 70: [Astuacatryan A., Arama, "Hayreniq", Boston, 1964, N 4, p. 70].

Դրա համար հարկավոր էր անցկացնել կազմակերպված գորահավաք: Արամը, որի էությունը խորթ էին ձևականությունները, արհեստական և ստանդարտ մոտեցումները, ձեռնարկեց մի շարք քայլեր, որոնք մեծ թափ հաղորդեցին գորակոչին: Նախ և առաջ, Արամի գլխավորությամբ ռազմական, հասարակական և քաղաքական մարմիններն ու գործիչները ժողովրդի շրջանում ծավալեցին քարոզչական լայն աշխատանք՝ թշնամու դեմ կազմակերպված պայքարի անհրաժեշտությունը բացատրելու և նրան ոտքի հանելու համար: Այդ նպատակով 1917 թ. դեկտեմբերի 23-ին Հատուկ կոմիտեն հրապարակեց Արամի հեղինակած «Կոչ հայ զինուորներին» շրջաբերականը: Այն ամենայն հստակությամբ նախ ներկայացնում էր իրավիճակի լրջությունը, ապա բոլորից պահանջում կանգնել հայրենիքի պաշտպանության դիրքերում⁵:

Դրան հաջորդեց գորակոչի հայտարարությունը, որով նախատեսվում էր հավաքագրել Երևանի նահանգի և Զանգեզուրի գավառի 20–32 տարեկան բոլոր հայ զինապարտներին: Մարտունակ և հայրենասեր բանակ ստեղծելու համար անհրաժեշտ էր գորակոչել բոլորին՝ առանց բացառության: Այդ իսկ պատճառով գորակոչի էին ենթակա նաև նախկինում ինչ–ինչ պատճառներով նրանից ազատվածները: Ընդգծելի է այն հանգամանքը, որ այդ գործին մասնակից էին դարձվում նոր շունչ ստացած նահանգի ներքին գործերի բաժինը և տեղական իշխանության մարմինները: Ընդ որում՝ հստակորեն նշվում էին նրանց պատասխանատվության շրջանակները: Անզիջում պայքար ծավալվեց դասալիքների, զենք–զինամթերք, պետական գույք հափշտակողների դեմ: Բացի այդ, հայկական զորքի ձևավորման գործն արդյունավորելու նպատակով, Երևանյան իշխանությունները, հավատարիմ իրենց խոստմանը, միջոցներ ձեռնարկեցին զորակոչվողների ընտանիքների կարիքները հոգալու ուղղությամբ: 1918 թ. հունվարի 12-ին Հատուկ կոմիտեն որոշեց մինչև ազգային ու պետական միջոցների գոյացումը այդ գործը դնել գյուղական համայնքների վրա⁶: Դա գորակոչվողներն ազատում էր այն ծանր մտատանջությունից, որ իրենց ընտանիքները կարող էին մատնվել սովի և այլ զրկանքների:

Ինչպես հայկական զորքի կազմավորման և ռազմաձևակառուցման ամրապնդման, այնպես էլ Երևանի նահանգում կարգուկանոնի հաստատման համար անհրաժեշտ էր լուծել ևս մեկ բարդագույն խնդիր՝ սանձել ահագնացող թաքարական հակապետական խռովությունները, որոնք կազմակերպվում էին թուրքերի կողմից: Այդ խռովությունները ոչ միայն խոչընդոտում էին գորամասերի փոխադրումը ռազմաձևակառուցման, այլև պատճառ էին դառնում, որ ռազմունակ հայերն իրենց հարազատներին պաշտպանելու համար գամված մնային սեփական բնակավայրերում կամ այդ նպատակով լքեին ռազմաձևակառուցման կտրուկ և հաշվենկատ գործողությունների արդյունքում 1918 թ. առաջին եռամսյակում հնազանդեցվեցին հիսունից ավելի թաքարական գյուղեր⁷: Արամը որպես հեռատես պետական գործիչ, չբավարարվեց միայն նրանց հնազանդեցմանը, այլև վարեց երկիրը թշնամական տարրերից մաքրելու քաղաքականություն: Այս խիստ անհրաժեշտ խնդրի լուծումը, ինչպես կտեսնենք, շարունակվեց նաև հետագայում:

Արամը հետևողական էր նաև երկրում կարգուկանոնի հաստատելու հարցում, քանզի լավ գիտակցում էր, որ առանց այդ հարցի լուծման մնացյալ բոլոր խնդիրները, այդ թվում և զորքի կազմակերպումը չէր կարող հաջող ընթանալ: Բանն այն է, որ օգտվելով երկրում ստեղծված ծանրագույն իրավիճակից՝ խիստ ակտիվացել էին անիշխանական տարրերը: Սկզբնավորվել էր մի շարժում, որը հայտնի է մաուզերիզմ անունով: Մաուզերիստների գործողությունների հետևանքով նահանգում ծաղկում էր թալանչիությունը, վտանգվում կյանքի և գույքի ապահովությունը:

5 Տես Հայաստանի Ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 290, ց. 1, գ. 2, թ. 5 [Hayastani Azgayin arxiv (HAA), f. 289, c. 1, g. 2, t. 5]:

6 Տես նույն տեղում, ֆ. 289, ց. 1, գ. 4, թ. 5, ֆ. 4047, ց. 1, գ. 110, թ. 4 [Ibid., f. 289, c. 1, g. 4, t. 5, f. 4047, c. 1, g. 110, t. 4]:

7 Տես նույն տեղում, ֆ. 121, ց. 2, գ. 84, թ. 5 [Ibid., f. 121, c. 2, g. 84, t. 5]:

Արամն անգիջում պայքար ծավալվեց նաև այդ երևույթի դեմ: Դա խիստ կարևոր էր երևանյան իշխանությունների հեղինակությունը ժողովրդական զանգվածների շրջանում բարձր պահելու և երկրի առջև ծառայած խնդիրները լուծելու հարցում նրանց լայն աջակցությունը ստանալու համար:

Ձեռնարկված միջոցառումները պայմանավորեցին գորահավաքի լիակատար հաջողությունը: Արամի գլխավորությամբ շնորհաշատ ու նվիրյալ ռազմական գործիչներ Դրոյի, գեներալ Մ. Սիլիկյանի, գնդապետ Դանիել բեկ Փիրումյանի և այլոց ծավալած հետևողական աշխատանքի շնորհիվ 1918 թ. մարտի սկզբներին հիմնականում ավարտվել էր Հայկական կորպուսի երկրորդ դիվիզիայի, այլ կերպ ասած՝ Երևանյան զորաջոկատի կազմավորումը⁸, որն առանցքային դերակատարություն էր ունենալու Մայիսյան հերոսամարտերի ընթացքում:

Արամին բնորոշ մյուս հատկանիշը բոլոր կենսունակ ուժերին շատ արագ մեկ նպատակի շուրջ համախմբելու ունակությունն էր: Իսկ դրա հիմքում ընկած էր անխտրական, անշահախնդիր և վերկուսակցական մոտեցմամբ մարդկանց ըստ արժանվույն գնահատելու նրա ունակությունը:

Արամը ցուցաբերեց նախանձելի համառություն ու հետևողականություն ժողովրդի գիտակցության մեջ սեփական ուժերին ապավինելու գաղափարն ամրապնդելու և համազգային համախմբում ստեղծելու համար: Նա սեղմ ժամկետում Երևանում ստեղծեց աշխատանքով հագեցած մթնոլորտ: Հայրենիքի անվտանգության ապահովման գործին լծվեցին ամենքը. Արամի շունչը զգացվում էր ամենուր: Նա ամեն տեղ էր թե՛ իր անմիջական ներկայությամբ և թե՛ խորհուրդներով, ցուցումներով ու հրահանգներով: Դա նաև նրա համեստության, բոլորի հետ, անմիջական և անկեղծ լինելու արդյունքն էր: Նա ոչ միայն կարողանում էր բոլորին համախմբել մեկ նպատակի շուրջ, այլև իր վճռական և արդարացի քայլերով կանխում էր այդ նպատակի դեմ ուղղված փորձերը: Ապացույցը՝ ժողովրդի գլխին պատուհաս դարձած մաուզերիստների սանձումն էր, դասալիքության դեմ անհաշտ պայքարը, Մայիսյան հերոսամարտերի ժամանակ հակապետական գործունեություն ծավալած տարրերի, մասնավորապես՝ անձնատվության կոչեր հնչեցնող ցուցարարների պարագլուխների չեզոքացումը:

Արամին բնորոշ, նրան ժողովրդի շրջանում մեծ հեղինակություն ապահովող գծերից էր հավասարակշռվածությունն ու անաչառությունը, փառամոլության և պաշտոնամոլության բացակայությունը: Այն իր դրսևումն էր ստացել դեռևս Վանի 1915 թ. ապրիլյան հերոսամարտի, ինչպես նաև դրանից հետո ստեղծված հայկական նահանգապետության կազմակերպման ու նրա առջև ծառայած տարաբնույթ խնդիրների լուծման ժամանակ: Հանդես բերելով քաղաքական հավասարակշռություն և առաջնորդվելով ընդհանուր գործի հաջողության շահերով՝ Արամը նահանգի հայկական կառավարության մեջ ընդգրկել էր բոլոր բանիմաց ուժերին՝ անկախ այն հանգամանքից, թե նրանք ինչ վերաբերմունք ունեին իր կամ ՀՅԴ-ի նկատմամբ: Նման մոտեցումն այնքան ակնհայտ էր, որ դա հետագայում արձանագրել են նույնիսկ տարբեր առիթներով Արամի հասցեին քննադատական խոսքեր ուղղած ռամկավար ազդեցիկ գործիչ Ա. Թերզիբաշյանը և այլոք⁹:

Օրինակ՝ 1918 թ. հունվարի վերջերին Թիֆլիսի Հայոց Կենտրոնական ազգային խորհուրդը, որը մինչ այդ Արամին արտակարգ լիազորություններով գործուղել էր Երևան՝ նահանգը ղեկավարելու համար, նրան նշանակեց նաև հայկական զորամասերի կոմիսար: Երևանի Զինվորական խորհրդին ուղղված Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի հեռագրում նշվում էր, որ «նա միակ մարդն է, որը կարող է զբաղեցնել այդպիսի պատասխանատու պաշտոնը»¹⁰: Սակայն հունվարի 28-ին Արամը

⁸ Տե՛ս նույն տեղում [ibid.]:

⁹ Տե՛ս Թերզիբաշյան Ա., Անդրանիկ, Փարիզ, 1942, էջ 228 [Terzibashyan A., Andranik, Pariz, 1942, p. 228]; Գուրգեն Մահարի, Այրվող այգեստաններ, Եր., 1966, էջ 571 [Gurgen Mahari, Ayrvox aygestanner, Er., 1966, p. 571]:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, թ. 442 [HAA, f. 222, c. 1, g. 24, t. 442]:

հրաժարվեց ստանձնել այդ պաշտոնը՝ խնդրելով իր փոխարեն նշանակել գին-վորականներից որևէ մեկին¹¹։ Սա հերթական անգամ փաստում է Արամի պետական մտածողությունը, պատասխանատվության զգացողությունը և պաշտոնամոլ չլինելը, ինչպես նաև այն իրողությունը, որ նա հստակորեն գիտեր իր տեղն ու անելիքը սրընթաց զարգացող իրադարձությունների հորձանուտում։ Արամն իրեն չէր համարել և չէր համարում գինվորական գործիչ, այդ իսկ պատճառով առաջարկում էր այդ կարևոր պաշտոնը տալ գինվորականի, քանզի լավ էր ըմբռնում, որ միայն գին-վորականը կարող էր ռազմական գործը դնել լավ հիմքերի վրա։ Ուստի այդ գործը վստահվեց Դրոյին, որն էլ ամենաբարձր մակարդակով առաջ տարավ այն։

Մեկ ուրիշ օրինակ. 1918 թ. հոկտեմբերին Արամը վճռականորեն արտահայտվեց կռալիցիոն կառավարություն ձևավորելու օգտին՝ լավատեղյակ լինելով հանդերձ, որ, դրանով նախ՝ իր լիազորությունների շրջանակը զգալիորեն կրճատվելու է։ Մինչդեռ՝ Հայ ժողովրդական կուսակցությունը, որի հետ ծրագրվում էր կազմել կռալիցիոն կառավարություն, դեռևս 1918 թ. ամռանը մերժել էր այդ տարբերակը։ ՀԺԿ-ն դեմ էր արտահայտվում նաև Արամին կառավարության մեջ ընդգրկելուն։

Արամի պետական մտածողության, շրջահայացության, միաժամանակ՝ հայրենի-քի շահը ամեն ինչից վեր դասելու արտահայտություններից է նաև այն, որ նրա համար հայ ժողովրդի ձգտումների իրականացման ճանապարհին չկար որևէ խոչ-ընդոտ։ Նա նաև իրատես գործիչ էր, կարողանում էր միմյանցից զատել ցանկալին ու հնարավորը։ Տեսնելով, որ թուրքական հարձակումը վտանգի տակ է դրել Հայ-րենիքը, Արամը, երկրորդական համարելով գաղափարական-քաղաքական տարա-ձայնությունները, ՀՅԴ մի շարք այլ գործիչների, առաջին հերթին՝ Ռոստոմի հետ համախորհուրդ, նախընտրեց համագործակցությունը բոլշևիկյան Ռուսաստանի հետ։ Այդ նպատակով նա հարաբերությունների մեջ մտավ Երևանի բոլշևիկների հետ, ինչպես նաև հեռակա կարգով մասնակցեց Թիֆլիսում ՀՅԴ գործիչների կողմից բոլշևիկյան կուսակցության Անդրկովկասի ղեկավարների հետ տարվող բանակցություններին, որի արդյունքում ընդունվեց համագործակցության գաղտնի ծրագիր։ Ծրագրի առանցքը հայ-բոլշևիկյան ձակառի ձևավորումն էր թուրքերի դեմ՝ պայմանով, որ ամբողջ Կովկասը, ներառյալ Արևելյան Հայաստանը, խորհրդայ-նանալու էր, իսկ Արևմտահայաստանը լինելու էր անկախ¹²։

Հայ գործիչների ջանքերը հաջողություն չբերեցին, որովհետև Կովկասում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Սո. Շահումյանը չկարողացավ կատարել հեռացող ռուսական բանակի մի մասին ձակատում պահելու իր խոստումը, իսկ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն ու թուրքական սրընթաց առաջխաղացումը ջնջե-ցին հետագա գործակցության հնարավորությունները։ Նկատելի է, որ ծրագրի իրա-կանացման դեպքում Հայաստանի արևելյան մասը մնալու էր Ռուսաստանի կազմում, այսինքն՝ Հայաստանը շարունակելու էր մնալ բաժանված։ Բայց փոխարենը, իսկ կարևորը դա էր, իրականանալու էր Արևմտյան Հայաստանը թուրքական դարավոր լծից ազատ տեսնելու նպատակը։

Արտաքին ձակատում համագործակցության ձգտող Արամը, այնուամենայնիվ, որպես իրատես գործիչ, շարունակում էր գլխավոր և առաջնահերթ խնդիր համարել հայության ներուժի մոբիլիզացումը։ Մասնավորապես, այս նույն ժամանակաշրջանում նա ջանում էր կապ հաստատել Բաքվում գտնվող Ռոստոմի հետ, որպեսզի ամ-րապնդի Երևանի թիկունքը և բացառի նոր «1915 թիւր»¹³։

Արամին բնորոշող, նրա մեծությունը պայմանավորող գծերից էին նաև նրա համեստությունը, ազնվությունն ու անշահախնդրությունը։ 1918 թ. մարտի 24-ին՝ Սարիղամիշի անկումից հետո, ժողովրդական զանգվածների, գինվորականության

11 Տե՛ս նույն տեղում, թ. 527 [Ibid., t. 527]:

12 Տե՛ս **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Է հատոր, Եր., 1990, էջ 142-143 [Ruben, Hay yexapoxakani mə yishataknerə, Er., 1990, E hator, pp. 142-143]:

13 Նույն տեղում, էջ 143 [Ibid., p. 143]:

և Երևանի Հայոց Ազգային խորհրդի կողմից ընտրվելով դիկտատոր, այսինքն՝ օժտվելով անսահմանափակ իշխանությամբ, նա մինչև վերջ այն օգտագործեց բացառապես հօգուտ համազգային շահերի, երբեք չձգտեց հարստության, երբեք չփորձեց իրեն վեր դասել ազգային ու գլխավորական կառույցներից: Լինելով անսահմանափակ իշխանության տեր, իր տնօրինության տակ ունենալով ժամանակի համար հսկայական միջոցներ՝ նա ապրում էր և մինչև իր կյանքի վերջին օրն ապրեց համեստ կենցաղով, հասարակ երևանցու նման, անգամ պատահում էր, որ ճաշի ժամանակ հաց չէր ունենում: Սա, թերևս, պատմության եզակի դեպքերից է:

Դիկտատորի պաշտոնը ստանձնելուց քիչ անց՝ 1918 թ. մարտի 28-ին, Արամը ժողովրդին դիմեց մի կոչով, որը միաժամանակ գործունեության համապարփակ ծրագիր էր՝ ուղղված ռազմաճակատի ամրապնդմանը, նահանգում ամուր իշխանության և կարգուկանոնի հաստատմանը: Արամը հստակորեն սահմանեց պետական և հասարակական կառույցների անելիքը՝ իրեն վերապահելով դրանց գործունեության ուղղորդումն ու վերահսկումը: Չափազանց կարևոր է այն հանգամանքը, որ նա երբեք անհարկի չմիջամտեց այդ կառույցների աշխատանքին և չվիրավորեց որևէ մեկին: Ի դեպ, ժողովրդին ուղղված Արամի այդ կոչն ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Ցոյց տանք աշխարհին, որ Հայը ազատ անկախ ապրելու իրաւունք ունի: Այժմ կամ երբէք»¹⁴: Այսինքն՝ ղեռ այն ժամանակ, երբ ոչ ոք չէր մտածում Արևելյան Հայաստանի անկախության մասին, Արամն աշխատում էր այդ ուղղությամբ: Արամի կողմից ներկայացված ծրագրի հստակությունը, անկախության գաղափարը գործնականացնելու ձգտումը, անշուշտ, խոսում են նրա լայն մտահորիզոնի, պետական մտածողության, ժամանակի մարտահրավերները ճիշտ ընկալելու և ճիշտ աշխատելու ունակության մասին:

Արամին բնորոշող և նրա հաջողությունը պայմանավորող գծերից մեկն էլ ժողովրդի շահերի գերակայության ընդունումն էր, նրանից երբեք և որևէ կերպ չհեռանալու պատրաստակամությունը, մշտական հարգանքը ժողովրդի նկատմամբ: Նա լավ էր հասկանում, որ միայնակ հնարավոր չէ հասնել հաջողության, որ հայրենիքի փրկությունը կախված է ժողովրդի մասնակցության աստիճանից, ուստի մշտապես փորձում էր բարձրացնել նրա ոգևորությունը: Նա նշում էր. «...դուք պիտի իմանաք, որ ես անոյժ եմ առանց ձեզ: Հերոսը ինքը ժողովուրդն է և եթե ժողովուրդը պատրաստակամութիւն ունի... աշխատել ու փրկել հայութիւնը վերահաս կործանումից, ապա իմ ու ինձ նման շատերի աշխատանքը ապարդիւն չի անցնի»¹⁵:

Եվ դա նրան հաջողվում էր, որովհետև ժողովուրդը աջակցում էր Արամին: Դրա փայլուն վկայություններից էր Մայիսյան հերոսամարտերի և ապա թուրքական կոտորածի գեհեհնով անցած Ղարաքիլիսայի (այժմ Վանաձոր) հայության վերաբերմունքը նրա նկատմամբ: Ահա թե ինչպես էին նրանք արտահայտել իրենց վերաբերմունքը Արամի և նրա գործակից գեներալ Սիլիկյանի հանդեպ Ղարաքիլիսայից թուրքական զորքերի հեռանալուց հետո՝ 1918 թ. հոկտեմբերի 20-ին. «Ուրախ ենք, որ Հայկական զօրքի և երկրի նեղքին գործերի կառավարութեան գլուխ կանգնած էք դուք, որ հայկական կեանքի ամենածանր շրջանում չլքեցիք ձեր ժողովրդին և ցաւակից եղաք նրան: Հաւատում ենք, որ ձեր աշխատութեամբ և եռանդի շնորհիւ կը կազմի ուժեղ բանակ և հաստատուն իշխանութիւն, որը վերջ կը դնի մեր ժողովրդի տանջանքներին»¹⁶: Դա ամենից առաջ այն բանի շնորհիվ, որ Արամի մոտ առկա էր խոսքի և գործի համապատասխանությունը: Նրա խոսքը միշտ իրականություն էր դառնում:

Արամի մեծությունը բացահայտող գծերից մեկը իրադարձությունները կանխա-

14 ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 9, թ. 1 [HAA, f. 289, c. 1, g. 9, t. 1]:

15 **Աֆանասյան Ս.**, Սարդարապատի հաղթանակը (Հայաստան. մայիս 1918), Եր., 1991, էջ 41 [Afanasyan S., Sardarapatı haxtanakə (Hayastan. mayis 1918), Er., 1991, p. 41]:

16 Ղարաքիլիսցիների հեռագիրը գեներալ Սիլիկյանին, պատճենը ներք. գործ. մինիստրին, «Զանգ», Եր., 27 հոկտեմբերի, 1918 [Xaraqilisacineri heragirə general Silikyanin, patchenə nerq. Gorc. Ministrin, “Zang”, Er., 27 hoktemberi, 1918]:

տեսելու և դրանց ընթացք տալու ունակությունն էր: Ասվածը լիովին ընկալելու և ճիշտ գնահատելու համար թեթևակի անդրադառնանք 1918 թ. Կարսի անկման պատմությանը: Մեր կարծիքով, Կարսի անփառունակ անկման մեջ իրենց մեղքի որոշակի բաժինն ունեին Թիֆլիսի հայ քաղաքական ղեկավար շրջանակները, որոնք ժամանակին չցուցաբերեցին նախաձեռնողականություն, ընթացք չտվեցին ռազմա-քաղաքական անցքերին, այլ սուկ հետևեցին դրանց զարգացմանը, ինչի հետևանքով էլ կանգնեցին տխուր փաստի առաջ: Նրանք պարտավոր էին վաղօրոք՝ մինչև 1918 թ. ապրիլի 10-12-ը, երբ գործադրվեց դավը, որոշել իրենց վերաբերմունքը Կարսի հետագա ճակատագրի հանդեպ: Այնինչ նրանք ժամանակին դա չարեցին և Կարսի անկումը փորձեցին բացատրել վրացիների կողմից Թիֆլիսի և Կարսի հայ հրամանատարության միջև հեռագրակապն անջատելու իրողությամբ, ինչն, իհարկե, անառարկելի փաստ է: Ասվածի համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ հայ գործիչները տեղյակ էին Կարսը թուրքերին զիջելու մասին Անդրկովկասի վրաց ղեկավար գործիչների պլաններին: Մինչդեռ, Հայկական կորպուսի հրամանատար զոր. Նազարբեկյանը Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի նախագահին հղած մարտի 30-ի հեռագրում հերքում էր Անդրկովկասյան կառավարության արտգաղտնախարար, վրացի Ա. Չխենկելու հայտարարությունն այն մասին, թե Կարսի բախտը կվճռվի մոտակա օրերում, և վստահեցնում, որ թուրքերին խիստ դժվար կլինի գրավել Կարսը, որովհետև նրա պաշտպանության համար ձեռնարկվել էին բոլոր միջոցները¹⁷:

Իսկ այժմ տեսնենք, թե ինչպես վարվեց Արամը 1918 թ. մայիսին, երբ թուրքական զորքերը կենտրոնացել էին Ախուրյան գետի աջ ափին: Այն դեպքում, երբ շատերը հույս էին տածում, թե թուրքերն այլևս չեն շարունակի հունվարից սկսած հարձակումը, քանի որ արդեն զբաղեցրել էին Բրեստ-Լիտովսկի ռուս-թուրքական հաշտության պայմանագրով իրենց զիջված տարածքները, Արամը, ընդհակառակը, գտնում էր, որ թուրքերը շարունակելու են հարձակումը, և վճռականորեն արտահայտվում նրանց դիմադրություն ցույց տալու օգտին՝ նշելով. «Եթե երբեք մեր ձակապտի վրա թուրքերը սկսեցին առաջխաղացումը, մենք անպայման պետք է դիմադրենք զենքով, թնդանոթով, ոչ թե ստրկորեն անձնատուր ըլլանք և կոտորվինք»¹⁸:

Այս հանգամանքը լրացուցիչ անգամ փաստում է, թե որքան վճռորոշ էր Արամի նման հեռատես, շրջահայաց ու կամային գործչի ներկայությունը Երևանի նահանգում:

Արամի հիշյալ որակները, ամենից առաջ՝ անկոտորում կամքը, ամբողջ ուժգնությամբ դրսևորվեցին 1918 թ. մայիսին, երբ թուրքերը ներխուժեցին Արարատյան դաշտ և մայիսի 20-21-ին գրավեցին Արաքս կայարանը, Սարդարապատ կայարանն ու գյուղը: Այդ ժամանակ, առավել քան երբևէ, դրվեց հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը: Թշնամու չորսամսյա առաջխաղացումը հայ քաղաքական շրջանակներին, զորքին, զորահրամանատարությանն ու բնակչությանը մատնել էր հուսալքության և անորոշության: Անգամ զորավար Մ. Միլիկյանը մի պահ ընկճվել էր այն աստիճանի, որ զորքերին կառավարելը համարում էր անհնար¹⁹: Իսկ գեներալ Թ. Նազարբեկյանն Ազգային խորհրդին հաղորդում էր թուրքերի հետ անհապաղ վերջնական հաշտություն կնքելու, նրանց հետագա հարձակման դեպքում բոլոր տեսակ ռազմական գործողությունները դադարեցնելու անհրաժեշտության մասին՝ միամտորեն հույս ունենալով, որ այդպես հնարավոր կլինի փրկել զորքի մի մասը և բնակչությանը²⁰: Չնոռանանք մի կարևոր հանգամանք ևս. մեր հարևանները, ելնելով մեր ծանր ռազմաքաղաքական դրությունից, ձգտում էին Գերմանիայի ու Թուրքիայի

17 Տե՛ս Գեն. Նազարբեկյանի հեռագիրը, «Հորիզոն», Թիֆլիս, 14 (1) ապրիլի, 1918: [Gen. Nazarbekyani heragira, "Horizon", Tiflis, 14 (1) aprili, 1918].

18 **Կոսոյան Հ.**, Հայկական Թերմոպոլիս, «Դրօշակ», Փարիզ, 1928, մայիս, N 5, էջ 137: [Kosoyan H., Haykakan Termopile, "Droshak", Pariz, 1928, mayis, N 5, p. 137].

19 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 98, թ. 18: [HAA, f. 121, c. 2, g. 98, t. 18].

20 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1022, ց. 3, գ. 253, թ. 1: [Ibid., f. 1022, c. 3, g. 253, t. 1].

աջակցությամբ զավթել հայկական տարածքները:

Հայոց մեջ իշխող պարտվողական տրամադրությունները, որոնք հանգում էին անգամ Երևանից նահանջելու անհեթեթ մտքին, անխուսափելիորեն տանելու էին դեպի կործանում, էթե չձեռնարկվեին արմատական հակամիջոցներ:

1918 թ. մայիսյան ծայրահեղ, թվում է, թե անհուսալի դրության մեջ՝ Արամը դրսևորեց թշնամուն հակահարված հասցնելու աներեր վճռականություն, իրավիճակին չհամակերպվելու և շրջապատին չենթարկվելու անսասան կամք: Ավելին, նա էր այն միակ գործիչը, որը կարողացավ անորոշության և հուսալքության պայմաններում լուսավորել իր ժողովրդի պատմական ճանապարհը և, բարձրացնելով նրա, գորքի և զորահրամանատարության ոգու կորովը, ուղի հարթել դեպի լուսավոր ապագա, դեպի ազգային իղձերի իրականացում, դեպի հայոց վերածնունդ, որը պետք է սկզբնավորվեր Հայոց պետականության վերականգնմամբ:

1918 թ. մայիսի 19-ին Արամը զորավար Մ. Սիլիկյանի հետ ունեցած հեռախոսագրություն անընդունելի համարեց հետագա նահանջը և Արարատյան դաշտում թշնամուն հակահարված հասցնելու համար վստահեցրեց, որ երկու օրվա ընթացքում զորավարին կտրամադրվի անհրաժեշտ ամեն ինչ՝ կամավորներ, զենք-զինամթերք և թիկունքի ոգևորությունը: Նա հրահանգեց անհապաղ՝ առանց տարիքի ու դիրքի խտրության ռազմաձևկատ ուղարկել բոլոր զինապարտներին²¹: Խստագույնս արգելվեց քաղաքից հեռանալը: Արամը, որը սիրում էր ամեն ինչին անձամբ հետևել, բազմապատկել էր եռանդը, նրան կարելի էր տեսնել ամենուր՝ զինվորականության շրջանում, հրապարակներում, շուկայում, տներում, եկեղեցիներում:

Մայիսի 19-ի երեկոյան գումարված Ազգային խորհրդի նիստում Արամն ամենայն վճռականությամբ բացառեց Երևանի հանձնումը թշնամուն՝ նշելով. «... ոչ մի նահանջ ոչ մի գծի վրա: Նահանջ Երևանից՝ կնշանակե խաչ քաշել մեր ամբողջ գործունեության և մեր ապագա քաղաքական մուրագներուն վրա, բոլորդ պիտի մնասք և մեռնիք»²²: Նրա, ապա նաև Ազգային խորհրդի անբեկանելի վճիռն էր՝ բոլորը պետք է մնան և պայքարեն մինչև արյան վերջին կաթիլը, մինչև վերջին փամփուշտը: Ազգային խորհրդի որոշումը՝ թշնամուն Մարդարապատում և Բաշ-Ապարանում հակահարված հասցնելու վերաբերյալ, հանձնվեց զորահրամանատարությանը, որն էլ ոգևորված գործի անցավ:

Հայրենիքի համար այդ ծանր օրերին անգամ կային ուժեր, որոնք ըմբոստանում էին իշխանությունների դեմ: Մարդարապատի մոտ հայկական զորքի թեթևակի նահանջից հետո՝ մայիսի 21-ին, Երևանում ծագել էր խռովություն, որի մասնակիցների անթաքույց ձգտումն էր հաշվեհարդարի ենթարկել Արամին, իսկ թաքնված և հեռահար նպատակը՝ անձնատուր լինել թշնամուն²³: Նրանք լավ գիտեին, որ Արամը դա թույլ չի տալու: Ծայրաստիճան վտանգավոր դրությունը հարթվեց Արամի վճռականության շնորհիվ: Այս կապակցությամբ նրա արտահայտած մտքերը շատ խոսուն են: Ազգային խորհրդում նա նշեց. «Այս միջոցին, երբ Մարդարաբաղի մեջ հայոց համար կեանքի և մահուան հարց է դրուած, ուր հայ արիւնը հոսում է, անթոյլատրելի է, որ մի դասալիք խայտառակութիւններ անի: Ես սպառնալիքից չեմ վախենում: Բայց երբ հայ ժողովրդի ճակատագրի մասին է հարցը, ես պահանջում եմ ամենալսիստ պատիժը»²⁴: Նրա հրամանով խռովարարների պարագլուխները գնդակահարվեցին, որից հետո ամբոխը հնազանդվեց իշխանություններին, իսկ

21 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), կազմող Ս. Բեհբուդյան. գիրք Ե, Եր., 1999, էջ 63: [Vaverager hay ekexecu patmutyan, Mayr Ator S. Ejmiacin@ Arajin Hanrapetutyen tarinerin (1918-1920 tt.), kazmos S. Behbudyan, girq E. Er., 1999, p. 63].

22 **Շահխատունի Ա.**, Արամը (Յիշողություններ), «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 30 հունվարի, 1921: [Shahxatuni A., Aram@ (Hishoxutyunner), "Chakatamart", K. Polis, 30 hunvari, 1921].

23 Տե՛ս **Շահխատունի Ա.**, Մարդարապատի հերոսամարտը և մահափորձը Արամ փաշայի դեմ (Իմ յուշերից), «Հայրենիք», 1959, օգոստոս, N 8, էջ 27-30: [Shahxatuni A., Sardarapati herosamart@ ev mahaporc@ Aram pashai dem (Im husheric), "Hayreniq", 1959, oostos, N 8, pp. 27-30].

24 Նույն տեղում, էջ 28: [Ibid., p. 28].

դասալիքներն ուղարկվեցին ռազմաձակատ:

Մի կողմից՝ դասալիքներին և անձնատվությամբ տարվածներին զսպելու, մյուս կողմից՝ հայրենաշունչ ելույթների միջոցով, ազգաբնակչության շրջանում տիրող խուճապը փոխարինվեց ոգևորությամբ, որի անմիջական հետևանքը եղավ կամավորների աննախադեպ հոսքը դեպի ռազմաձակատ: Այս առումով կարևոր էր հատկապես մայիսի 21-ին Երևանում կայացած հանրահավաքում Արամի մարտաշունչ ելույթը²⁵, որը մեծապես բարձրացրեց ժողովրդի վստահությունն ու մարտական ոգին: Արամի հրահանգներով պարտիզանական շարժում ծավալվեց Բաշ-Ապարանի ձակատում, որը կարևոր նշանակություն ունեցավ թուրքերին դիմադրություն կազմակերպելու գործում, մինչև որ Սարդարապատի ռազմաձակատից կանտնավոր գորամասեր ուղարկվեցին այնտեղ:

Գեներալ Մ. Միլիկյանի և փոխգնդապետ Ա. Վեքիլյանի մշակած հակահարձակման պլանի հիման վրա 1918 թ. մայիսի 22-ին հայկական զորքերը Սարդարապատի ձակատում անցան հարձակման և ծանր պարտության մատնեցին թուրքերին՝ հարկադրելով նահանջել դեպի Ալեքսանդրապոլ: Բաշ-Ապարանի ձակատում Դրոյի գլխավորությամբ գործող գորամասերը թուրքերից ազատագրեցին Ալի-Բուչակն ու Բաշ-Ապարանը: Մայիսի 24-28-ը գեներ. Թ. Նազարբեկյանի ընդհանուր հրամանատարությամբ գործող 7000-ոց բանակային և աշխարհագորային ջոկատները Ղարաքիլիսայի մոտ հուժկու դիմադրություն ցույց տվեցին թուրքական 10000-ոց բանակին:

Նշված ժամանակաշրջանում իրենց տրամաբանական վախճանին հասան նաև տարածաշրջանում զարգացող քաղաքական անցքերը: Մայիսի 26-ին Անդրկովկասյան հանրապետությունը դադարեց գոյություն ունենալուց: Նույն օրը վրացիները, որոնք պահը հարմար էին նկատել զատվելու «խեղդվող» հայերից, հռչակեցին Վրաստանի անկախությունը: Հաջորդ օրը կովկասյան թաթարների ներկայացուցիչները հայտարարեցին իրենց պետության ստեղծման մասին՝ նրան տալով Ադրբեջան անունը:

Երկար քննարկումներից հետո՝ 1918 թ. մայիսի 28-ին, Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը հռչակեց Հայաստանի անկախությունը, ավելի ճիշտ՝ հայկական գավառների նկատմամբ Հայոց Ազգային խորհրդի գերագույն և միակ իշխանությունը: Այդ օրը անկախ Հայաստանի անունից Թուրքիայի հետ բանակցություններ վարելու համար պատվիրակություն ուղարկվեց Բաթում: Եվ եթե մինչև Մայիսյան հերոսամարտերը թուրքերը կտրականապես հրաժարվում էին բանակցել հայերի հետ, ապա այժմ նստեցին բանակցությունների սեղանի շուրջ և նույնիսկ արագացնում էին հաշտության կնքումը:

1918 թ. հունիսի 4-ին Բաթումում Հայաստանի և Թուրքիայի միջև կնքվեց հաշտության պայմանագիր, որը, իրոք, ծանր էր հայ ժողովրդի համար: Բավական է նշել, որ հայոց նորաստեղծ պետականությանը թողնվում էր ընդամենը 12 հազար քառ. կմ տարածք և մի քանի կմ երկաթուղագիծ: Բայց և այնպես, և գլխավորն այստեղ դա է, իրականանում էր անկախ պետականության վերականգնման հայոց բազմադարյան ձգտումը, որն ինքնին մեծ նվաճում էր դարավոր թշնամու դեմ երկարատև պայքար մղող հայության համար: Հիշենք, որ մինչև Մայիսյան հերոսամարտերը թուրքերը դեմ էին ինքնուրույն Հայաստանի ստեղծման ցանկացած գաղափարի²⁶, իսկ անկախության հռչակումից հետո էլ ամեն ինչ անում էին այն խորտակելու համար:

Բաթումում թուրքական վերջնագիրն ընդունելուց հետո Ա. Ահարոնյանը

25 Տե՛ս Ներքին տեսութիւն, Պատմական օրերը, «Հորիզոն», 6 սեպտեմբերի, 1918: [Nerqin tesut'yun, Patmakan orera, "Horizon", 6 septemperi, 1918].

26 Տե՛ս Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), Материалы Политического архива министерства иностранных дел Кайзеровской Германии: Сборник. Составитель, ответственный редактор, автор предисловия, введения и примечаний В. Микаелян, Ереван, 1995, с. 508. [Arмянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Materiala Politicheskogo arxiva ministerstva inostrannax del Kaizerovskoy Germanii: Sbornik. Sostavitel, otvetstvennoy redactor, avtor predislovia, vvvedenia i primechanii V. Mikaelyan, Er., 1995, p. 508].

Թիֆլիսից Երևանի Հայոց Ազգային խորհրդին հաղորդում էր. «... թեև փոքրիկ և աղքատ բայց Ազատ Հայաստանի համար մենք պարտական ենք մեր գորքերի անձնագրությունը: Որքան մեզ հայտնի է, գերմանացիները և թուրքերը Կովկասը բաժանում էին Վրաստանի և Ադրբեջանի, հայերին ապահովելով միայն ֆիզիկական գոյություն: Պետք է ենթադրել, որ մեր գորքի դիմադրությունը նրանց հարկադրեց ճանաչել և Հայաստանը»²⁷:

Այսպիսով, 1918 թ. մայիսի 28-ին ստեղծվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը: Այն ստեղծվեց ոչ թե մայիսի 28-ի հայտարարությամբ, ոչ թե ինչ-որ բանակցությունների կամ մի ինչ-որ երկրի, առավել ևս՝ հայության ռևոլյուցիոն թշնամի Թուրքիայի բարյացակամության, այլ բացառապես Մայիսյան հերոսամարտերի շնորհիվ: Իսկ Մայիսյան հերոսամարտերի կազմակերպումը հնարավոր դարձավ առաջին հերթին Արամ Մանուկյան պատմական անհատականության շնորհիվ, անհատականություն, որին բնորոշ էին անկոտրուց կամքը, վճռականությունը, հեռատեսությունը, շրջահայացությունը, ռազմավարական մտածողությունը, կազմակերպչական ձիրքը, հետևողականությունն ու անդադրում աշխատանքը:

Արամի պատմակերտ անհատականությունն ամբողջացնող կարևորագույն գծերից էին իրականության սթափ զգացողությունը, սառը դատողությունը, ինչպես նաև ռազմավարական մտածողությունը: Նա երբեք չընկավ անհնարին հանդիսացող ցանկալիի հետևից: Ասվածի վկայություններից մեկը Մայիսյան հաղթանակներից հետո նրա զուսպ և հավասարակշիռ դիրքորոշումն էր Բաթումի հաշտության պայմանագրի նկատմամբ: Առաջնորդվելով իրատեսությամբ, Արամը, որ ամեն ինչ արեց Մայիսյան հերոսամարտերի կազմակերպման համար, հաշտվեց այդ ծանր պայմանագրի հետ՝ միաժամանակ իր մեջ զսպելով հայրենիքի ավելի շատ տարածքներ ազատագրված տեսնելու ձգտումը, այն պարզ պատճառով, որ պատերազմի շարունակումը կարող էր կործանարար լինել Երևանի համար:

Որքան էլ որ նրա համար դժվար էր համակերպվել հայ ժողովրդին պարտադրված թուրքական ծանր պայմաններին, որքան էլ որ ծանր էր հարաբերվելու, թուրք ջարդարարների հետ, Արամն առաջնորդվում էր վերջիններիս հետ բանակցելու, նրանց նկատմամբ ամերկայացրած վերաբերմունք ցուցաբերելու և, դրանով իսկ, ժամանակ շահելու հրամայական անհրաժեշտությամբ: Ժամանակը չէր խրոխտ կեցվածքի, այն միայն կրարողացներ հայոց կացությունը: Իսկ ժամանակը տվյալ դեպքում կարող էր աշխատել հայության օգտին: Բաքվում Ռոստոմի գլխավորությամբ շարունակվում էին հայկական գորքի հերոսական կռիվները թուրքական բանակի դեմ, արդեն ուրվագծվում էր նաև Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտության հեռանկարը: Դա է պատճառը, որ ամբողջ կյանքը թուրքերի դեմ պայքարած և տվյալ պահին նրանց կողմից կազմակերպվող թաթարական հակապետական խռովությունները ճնշած Արամը դիվանագիտական էթիկետի կանոններին համապատասխան՝ 1918 թ. օգոստոսի 31-ին ընդունելություն կազմակերպեց Երևան ժամանած թուրք զորավար, եղեռնագործ Խալիլի համար²⁸: Արամն անձամբ ժամանեց երկաթուղային կայարան՝ թուրք գործչին դիմավորելու նպատակով ու գրկախառնվեց, անգամ համբուրվեց նրա հետ:

Արամը, ինչպես միշտ, չսխալվեց: Ընդամենը մի քանի ամիս անց Թուրքիան անձնատուր եղավ դաշնակիցներին, որի արդյունքում Հայաստանի առաջին Հանրապետության տարածքն ընդարձակվեց մի քանի անգամ: Նման իրողությունները փաստում են, որ նրա որոշումները լիովին հավասարակշռված էին, լավ մտածված:

Ճիշտ է, Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդն իրեն հռչակել էր նորանկախ Հայաստանի գերագույն իշխանություն և նրա քաղաքական ու վարչական ղեկը վարելու համար ստանձնել կառավարական գործառնությունները, սակայն մի շարք

27 ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 2, թ. 10; գ. 11, թ. 5: [HAA, f. 289, c. 1, g. 2, t. 10; g. 11, t. 5].

28 Տես ՀԱԱ, ֆ. 370, ց. 3, գ. 19, թ. 55: **ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ Վ.**, Արամի կենսագրություն, 1925, նոյեմբեր, N 1, էջ 75-79: [HAA, f. 370, c. 3, g. 19, t. 55: **Navasardyan V.**, Arami kyanqic, "Hayreniq", 1925, noyember, N 1, pp. 75-79].

պատճառներով թե՛ նրա և թե՛ նրա հանձնարարությամբ Հ. Քաջագնունու կողմից ձևավորվող ՀՀ կառավարության ժամանուրը Երևան մոտ երկու ամիս հետաձգվում էր:

Նորանկախ Հայաստանի դժնդակ կացությունը թելադրում էր անհապաղ ստեղծել պետական իշխանություն: Այսպիսի իրավիճակում Արամն անմիջապես ձեռնամուխ եղավ Հայաստանի անկախությունը գործնականացնելու և պետականության հիմքերը դնելու աշխատանքին: 1918 թ. հունիսի կեսերին նրա նախաձեռնությամբ ստեղծվեց անկախ Հայաստանի ժամանակավոր կառավարության դեր կատարող Երևանի Ազգային խորհրդի Վարչությունը, որը պետք է գործեր մինչև ՀՀ անդրանիկ կառավարության ժամանելը Երևան²⁹:

«**Վարիչների մարմին**» անունով հայտնի այդ մարմնի նախագահը և զինվորական բաժնի վարիչը Արամ Մանուկյանն էր, թեև վերջին պաշտոնից նա ամեն կերպ փորձեց խուսափել, որպեսզի չխցի զինվորականության ինքնասիրությունը և չվնասի համերաշխ գործակցությանը³⁰: Փաստորեն դարձյալ Արամի ձեռքում էր կենտրոնացել երկրի գործադիր իշխանությունը: Հայաստանի առաջին Հանրապետության պետական գործիչներից Ա. Բաբայանը նրա գոյության առաջին օրերի մասին գրելիս նկատել է. «Արամն էր, որ փաստորեն կառավարում էր երկիրը: Իբրև լիազոր Ազգային Խորհրդի, նա կազմակերպել էր վարչությունները և սպասում էր նորընտիր կառավարության և Ազգային Խորհրդի Երևան տեղափոխություն»³¹: Հայաստանի նախակառավարության մեջ ընդգրկելով ժողովրդի մեջ հեղինակություն ունեցող գործիչների, նա կարողացավ ապահովել նորանկախ երկրի անվտանգությունը, սոցիալ-տնտեսական և քաղաքական կայունությունը, մինչև որ ՀՀ կառավարությունը տեղափոխվեց Երևան³²:

Այս ժամանակաշրջանում ևս նկատելի են Արամի պետական մտածողությունը, հետևողականությունն ու շրջահայացությունը: Նա և նրա կառավարությունը ոչինչ չէին թողնում ինքնահոսի և ոչինչ չէին անտեսում: Մասնավորապես, գիտակցելով լրատվության կարևորությունը պետականաշինության համար այդ բարդ ժամանակաշրջանում, հունիսի 23-ին որոշվեց հիմնել պետական թերթ՝ «Երևանի Ազգային խորհրդի լրատու»-ն³³: Ավելին, մամուլի գործունեությունը ինքնահոսի չմատնելու նպատակով ստեղծվեց նաև պատերազմական ժամանակի մամուլի վերաբերյալ հրահանգ մշակող հանձնաժողով: Որոշակի հսկողություն սահմանվեց հրապարակային ելույթների վրա, ելնելով այն հայեցակետից, որ իրականացվելիք քայլերի հաջողությունն ամենից առաջ պայմանավորված էր հասարակական կայունությամբ: Բնորոշ է նաև հետևյալ օրինակը. Արամը Երևանի գավառային կոմիսարին հանձնարարեց ձեռնարկել միջոցներ, որպեսզի Քանաքեռ գյուղի բնակիչները չնեղեն այնտեղ հաստատված փախստականներին: Այդ նպատակով սահմանվեց հաստատագրված ամսական վարձ՝ փախստականների կողմից օգտագործվող սենյակների դիմաց, ինչպես նաև նրանց անասունները արոտավայրեր տանելու կարգ, որպեսզի ոչ փախստականները և ոչ էլ տեղացիները չափից ավելի չտուժեն, և նրանց միջև հարաբերությունները չարվեն³⁴: Առաջին հայացքից գուցե սա մանրուք թվա, սակայն երկրի կայունությունն ու առաջընթացը, անկասկած, զգալի չափով պայմանավորված էր սոցիալական արդարությամբ, հասարակական համերաշխությամբ, հետևաբար դա միանգամայն անհրաժեշտ քայլ էր:

ՀՀ անդրանիկ կառավարության մեջ Արամը զբաղեցնում էր առանցքային դիրք:

29 Տե՛ս «Լրատու» Երևանի Հայոց Ազգային խորհրդի, Եր., 9 հուլիսի, 1918: [“Lratu” Erevani Hayoc Azgayin xorhrdi, Er., 9 hulis, 1918].

30 Տե՛ս **Աստուածատրեան Ա.**, Արամ, «Հայրենիք», 1964, հուլիս, N 7, էջ 74: [Astuacatryan A., Aram, “Hayreniq”, 1964, hulis, N 7, p. 74].

31 **Բաբայան Ա.**, Էջեր՝ Հայաստանի անկախության պատմությունից, Կահիրե, 1959, էջ 8: [Babalyan A., Ejer Hayastani ankahtyan patmutyunic, Kahire, 1959, p. 8].

32 Տե՛ս **Ասրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 210–218: [Asryan A., Op. cit., p. 210–218].

33 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, գ. 1, գ. 7, թ. 5: [HAA, f. 206, c. 1, g. 7, t. 5].

34 Տե՛ս նույն տեղում, ֆ. 201, գ. 1, գ. 15, թ. 27: [Ibid., f. 201, c. 1, g. 15, t. 27].

Նրան էր վստահվել միաժամանակ մի շարք նախարարությունների՝ ներքին գործերի, կրթության, հաղորդակցության, պարենավորման, խնամատարության, ղեկավարությունը: Նրա ազդեցությունը տիրական էր և, միաժամանակ, դրական՝ երկրի ներքին կյանքի բոլոր բնագավառներում: Արամը, առաջնորդվելով ազգային-պետական մտածողությամբ, դրսևորվելով կազմակերպական տաղանդ, ժողովրդին հավաքական գործունեության մղելով համար այնքան անհրաժեշտ ազնվություն և անձնական անշահախնդրություն, նախաձեռնողականություն ու հետևողականություն, նպատակային գործունեություն ծավալեց ամուր իշխանության և իրավակարգի հաստատման, անվտանգության ապահովման, թուրք-թաթարական խռովարարների սանձման, երկրի հայացման, փախստականների ու որբերի խնամքի և այլ ուղղություններով՝ այդ կերպ էականորեն նպաստելով նորաստեղծ պետականության ամրապնդմանը: Արամի մոտեցումների նույնականությունը բոլորի նկատմամբ՝ անկախ կուսակցական, պետական և սոցիալական դիրքից, համեստ կենցաղը, անշահախնդրությունը, հայրենասիրությունը, իր և իշխանությունների հանդեպ ժողովրդական վստահության ամրապնդման և պետականության կայացման համար հուսալի գրավականներ էին, որոնք նրան առավել ազատ ու համարձակ գործելու հնարավորություն էին ընձեռում:

Արամ Մանուկյան պետական գործչի ուշադրությունից չէր վրիպում ոչինչ, որ կարող էր վնասել պետականաշինությանն ու երկրի անվտանգությանը: Այս առումով ուշագրավ է նրա վերաբերմունքը բնակչության մոտ գտնվող զենք-զինամթերքի պետականացման հարցի նկատմամբ: 1918 թ. օգոստոսի 29-ին Հայաստանի Խորհուրդն ընդունեց Արամի ներկայացրած «Մասնավոր սեփականություն կազմող զենքերի և զինամթերքների պետականացման մասին» օրենքը³⁵: Հիմնավորվելով օրենքի անհրաժեշտությունը՝ նա իրավացիորեն նշում էր, որ հնարավոր չէ երկրում ամուր իշխանություն և կարգուկանոն հաստատել առանց մասնավոր զենք-զինամթերքի պետականացման, որովհետև հաճախ կառավարության կարգադրությունները չեն կատարվում, իսկ հարկադրանքի դեպքում ցուցաբերվում է զինված դիմադրություն: Արամը իրավացիորեն գտնում էր, որ եթե ժամանակին ժողովրդին զինելն անհրաժեշտություն էր և ուներ ինքնապաշտպանական նպատակներ, ապա տվյալ պահին անձի անձեռնմխելիությունը և նրա այլ իրավունքների պաշտպանությունը պետական իշխանության պարտականությունն էր³⁶: Միաժամանակ նա գիտակցում էր, որ զենքի համատարած գրավումը կարող էր վնասել երկրի անվտանգությանը: Այդ իսկ պատճառով, վտանգված գյուղերի ինքնապաշտպանությանը չվնասելու նպատակով օրենքում առանձին կետ էր մտցվել այդ գյուղերից գրավված զենքի մի մասը տեղում՝ հատուկ մարդկանց պահպանության ներքո թողնելու մասին:

Ամեն ինչ ծառայեցվում էր հայոց պետականության կայացման գերնպատակին: Այդ ճանապարհին նրա համար չկային արտոնյալներ՝ Նա պահանջկոտ ու խիստ էր բոլորի, հատկապես պետական պատասխանատու դիրքեր զբաղեցնող պաշտոնյաների նկատմամբ, և ամեն ինչ անում էր նրանց մեջ պատասխանատվության զգացումը բարձրացնելու համար: Այսպես, 1918 թ. սեպտեմբերի 8-ի շրջաբերականով Արամը գավառային կոմիսարներին և այլ պաշտոնյաների զգուշացնում էր, որ եթե իրենց նկատմամբ լրագրերում հրապարակված մեղադրանքները կարձ ժամանակում չհերքեն, ապա կհեռացվեն աշխատանքից և դատի կտրվեն³⁷:

Արամի նկարագիրն ամբողջացնելու համար խիստ կարևոր է մի կողմից՝ ազգային-պետական շահերի, մյուս կողմից՝ օրենքի, օրինականության և կարգուկանոնի նկատմամբ նրա դիրքորոշման պարզաբանումը: Արամին, որի հիմնական նպատակներից մեկը հայոց երկրում կարգուկանոնի, իրավակարգի հաստատումն էր, թե՛ ՀՀ ստեղծմանը նախորդած ժամանակաշրջանում և թե՛ ՀՀ գոյության ընթացքում, միա-

35 Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 4, թ. 1: [Ibid., f. 199, c. 1, g. 4, t. 1].

36 Խմբագրական, Զինաթափման օրինագիծը, «Զանգ», 28 օգոստոսի, 1918: [Xmbagrakan, Zinatapman orinagica, "Zang", 28 agosto, 1918].

37 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 1, թ. 79-82: [HAA, f. 201, c. 1, g. 1, t. 79-82].

նշանակ խորթ էր պետական պաշտոնյայի գործառույթների, ինչպես նաև օրենքների դոգմատիկ, կույր ընկալումն ու մեխանիկական կիրառումը, և ընդհակառակը, ընդունելի էր պետության և ժողովրդի շահը, եթե նույնիսկ դա օրենքով ամրագրված չէր: Նրա համար ընդունելի էր նույնիսկ օրենքի շրջանցումը, եթե դրա կատարումը կարող էր հարվածել երկրի ու ժողովրդի շահերին: Ելնելով բացառապես նման ըմբռումից՝ Արամը երբեմն անտեսում էր օրենքն ու գործող կարգը՝ իր վրա վերցնելով ողջ պատասխանատվությունը: Իսկ ովքեր կարող էին այդ կերպ վարվել: Համոզված ենք՝ միայն մեծ մարդիկ, քանզի միայն նրանց է հատուկ այդպիսի պատասխանատու գործելակերպը: Նա իրավացիորեն կարծում էր, որ «կան դէպքեր... երբ օրէնքն ու իրաւունքը գործադրելով՝ մենք յանցաւորներ կը դառնանք, մանաւանդ այնպիսի ծանր ու անբնական ժամանակներում, երբ դէպքերը տեղի են ունենում գահավէժ արագութեամբ և ստեղծում դրույթիւններ, որոնք օրէնքը չէր կարող նախատեսել»³⁸:

Ավածը հաստատելու համար ներկայացնենք բազմաթիվ ուշագրավ օրինակներից մի քանիսը: Արամին բնորոշ նման գործելակերպին մենք հանդիպում ենք դեռևս 1918 թ. գարնանը, երբ նա առանց վարանելու կարգադրեց մահապատժի ենթարկել հայ ավազակային տարրերի պարագլուխ Չոլայ Գևորգին, որը նախագրուշացումներից հետո էլ չէր դադարեցրել իր չարագործությունները և նույնիսկ ըմբոստացել էր իշխանությունների դեմ³⁹: Ի դեպ, թեև իրավական տեսակետից ոչ օրինական, բայց կտրուկ և միանգամայն արդարացված քայլը կարևոր նշանակություն ունեցավ հանցագործությունների զսպման և նահանգում կարգուկանոնի հաստատման համար:

Մյուս օրինակը. Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծումից հետո ներքին գործերի նախարարի պաշտոնը ստանձնած Արամը, ի պաշտոնե, պարտավոր էր ապահովել հանրապետության ամբողջ բնակչության անվտանգությունը: Սակայն հայոց պատմական տարածքներում նստած և հայի արյամբ իրենց ծարավը հագեցնող թուրք-թաթարական զանգվածների հակապետական գործողությունների հետևանքով պետության գլխին կախված մահացու սպառնալիքը և միաժամանակ՝ անօթևան հայ փախստականների ոչնչացման վտանգը նրան դրդում էին գործել այլ կերպ: Նա ոչ միայն զենք-զինամթերք էր տրամադրում երկիրը թուրք-թաթարական թշնամական զանգվածներից մաքրելու համար գործողություններ իրականացնող խմբապետ Մուշեղի և ուրիշների գլխավորած արևմտահայ խմբերին⁴⁰, այլև այդ նպատակի համար երբեմն օգտագործում էր միլիցիայի ուժերը⁴¹: Այս կերպ նա ապահովում էր հանրապետության անվտանգությունը, միաժամանակ, նպաստում հայ փախստականների տեղավորմանն և նրանց կյանքի համար տանելի պայմանների ստեղծմանը, երկրի հայացմանը, որը ռազմավարական նշանակություն ունեցող խնդիր էր:

ՀՀ ներքին գործերի նախարար Արամը, որին վստահվել էր նաև կրթության նախարարության ղեկավարումը, քայլեր էր ձեռնարկում զինվորական և այլ կառույցների կողմից զբաղեցված դպրոցական շենքերն ազատելու և դրանցում կրթական գործընթացը վերսկսելու համար: Սակայն 1918 թ. աշնանը ելնելով բազմաահազար որբերի պատսպարման, հետևաբար նրանց անխուսափելի զրկանքներից և կործանումից փրկելու նպատակից, Արամն արդարացրեց Երևանի դպրոցներից մեկը նրանց տրամադրելու մասին Ռուբեն Տեր-Մինասյանի՝ օրենքին հակասող արարքը և դրանով իսկ հավանություն տվեց վերջինիս այն մտքին, թե «ողջ և ապահով երեխաների ուսման հարցը աւելի կարևոր չէ, քան փողոցներում թափուածների ու քաղցի ճի-

38 «Արամը», Մահումա յիսամեակին առթիւ, Եր., 1991, էջ 140 [Aramə, Mahuan yisamyakin artiv, Er., 1991, p. 140]:
39 Տե՛ս Բժ. Յովակիմ Մելիքեան, Արեան ճանապարհով, «Հայրենիք», 1925, փետրվար, N 4, էջ 85: [Bj. Yovakim Meliqyan, Aream chaparhov, "Hayreniq", 1925, petrvar, N 4, p. 85].

40 Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., էջ 111: [Ruben, Op. cit., p. 111].

41 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 16: [HAA, f. 45, c. 1, g. 32, t. 16].

րաններում գալարուղների կեանքը»⁴²:

Կարևորն այն է, որ Արամի այս և առհասարակ մնացած բոլոր արարքները գերծ էին անձնական շահախնդրությունից: Նա երբեք օրենքը չըջանցեց և իր պաշտոնական դիրքը չօգտագործեց հանուն անձնական շահի: Սրանք և առհասարակ Արամի ամբողջ գործունեությունը, փաստում են, որ նա ուներ ընդգծված պետական մտածողություն:

Ցավոք, Արամ Մանուկյանին վիճակված չէր երկար ապրել և շարունակել հանրապետության ամրապնդմանն ուղղված կշռադատված գործունեությունը: Ժողովրդի հետ ամենօրյա անմիջական շփումների մեջ գտնվող գործիչը վարակվեց բժավոր տիֆով և վախճանվեց 1919 թ. հունվարի 29-ին:

Արամ Մանուկյանի մեծության, նրա պատմակերտ դերակատարության լավագույն բնորոշումներից մեկը տվել է Նիկոլ Աղբալյանը 1919 թ. փետրվարի 1-ին՝ Արամի թաղման կապակցությամբ ՀՅԴ Արևելյան բյուրոյի անունից ներկայացրած մահախոսականում: Նա նշել է. «...մենք այս օր պիտի թաղենք մեծ մարդը, զոր հայ ժողովուրդը տուած է մեծ պատերազմի ընթացքին: Ինչ է մեծ մարդը-Մեծ մարդը ան է, որ գիտէ ըմբռնել ժամանակի հարցը և որոնք էին այս վերջին շրջանի մեծ հարցերը, որ համայնի ժայ ժողովրդին կը պատկանէին-հայ ժողովրդի պաշտպանութեան և ազատութեան հարցերն էին ատոնք ...Վանը բոլորի յիշողութեան մէջն է, հոն-Արամը հանդիսացաւ հայու հերոսական ոգին, փրկելով անոր ռազմական պատիւը: Երևանը վկայ էր այն հզոր ուժին, որ կար և կապրեր անոր մէջ, որ կազմակերպեց դիմադրութեան ուժը և այդ դիմադրութեան շնորհիւ կարողացաւ հիմք դնել Հայաստանի Հանրապետութեան, հայ ժողովրդի ազատագրութեան»⁴³: Մեզ մնում է ավելացնել միայն, որ նա ձիշտ ըմբռնելով ժամանակի առաջադրած հարցերը, ամեն ինչ արեց դրանք լուծելու համար:

Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծման, ապա նաև նրա հիմքերի ամրապնդման գործում ունեցած առաջնակարգ և վիթխարի ներդրման, հիրավի՝ պատմակերտ դերի համար Արամ Մանուկյանն արժանացավ Հանրապետության հիմնադրի պատվանունին: Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծման համար մեծապես պարտական ենք նրան: Սակայն պետք չէ ընկնել ծայրահեղության մեջ և հետևություն անել, թե Արամը միայնակ կերտեց Հայաստանի Հանրապետությունը: Այն արդյունք էր բազմաթիվ գործիչների գերմարդկային ջանքերի և ժողովրդական լայն զանգվածների մասնակցության: Պարզապես պետք է արձանագրել անառարկելի և վստահորեն ասել, որ Արամը նրանց մեջ առաջինն էր, գլխավորը, բոլորին ոգեշնչողը, համախմբողն ու ծրագրված պայքարի առաջնորդողը:

Արամ Մանուկյան անհատականությանը բնորոշ որակները՝ անկեղծ և անմնացորդ նվիրումը ազգային արժեքներին, ռազմավարական մտածողությունը, իրատեսական ազգային նպատակների առաջադրումը և հետապնդումը, այդ ընթացքում անկոտրում կամքի դրսևորումը, ազգային ուժերին ապավինումը, հաստատականությունը, հավասարակշռվածությունն ու անշահախնդրությունը, կենսակերպով ժողովրդից էականորեն չտարբերվելու, նրանից չխորթանալու մեծ կամքը, այն որակներն են, որոնց առկայության դեպքում հայ քաղաքական, պետական, ռազմական գործիչներն ու ուժերը կարող են համախմբել մեզ բոլորիս և հասնել հայոց պետականության հզորացմանը, որը հանդիսանում է Միացյալ Հայաստանի ստեղծման և մեր ժողովրդի բարեկեցիկ և անվտանգ կյանքի միակ հուսալի գրավականը:

Արմեն Ս. Ասրյան- գիտական հետաքրքրություններն ընդգրկում

42 «Արամը», էջ 139: [Aramə, p. 139].

43 Նիկոլ Աղբալյանի դամբանականը. «Աշխատանք», Եր., 12 փետրվարի, 1919: Վրացյան Ս., Կեանքի ուղիներով: Դէպքեր: Դէմքեր: Ապրումներ, հատոր Ե, Պէյրուօ, 1966, էջ 54-55: [Nikol Axbalyani dambakanə, "Ashxatang", Er., 12 petrvari, 1919: Vrcyan S., Kyanqi uxinerov: Depqer: Demqer: Aprumner, hator E, Beyrut, 1966, pp. 54-55].

են Արամ Մանուկյանի կյանքը և գործունեությունը, հայ ազատագրական շարժման, Հայոց ցեղասպանության և Հայաստանի առաջին Հանրապետության պատմության հիմնահարցերը: Հեղինակ է երկու մենագրության, մեկ ուսումնական ձեռնարկի, մեկ ուսումնաօժանդակ գրքույկի և ավելի քան երեք տասնյակ գիտական հոդվածների:

Էլ. փոստ – gtk -11@mail.ru

Summary

INDIVIDUALITY OF ARAM MANUKYAN AS THE DRIVING FORCE OF HISTORY-MAKING

Armen S. Asryan

Key words– Aram Manukyan, individuality, unshakable will, nation, power, Armenia, political figure, republic, prudence, decisiveness, responsibility, consistency.

In the histories of many nations, including that of Armenia, individuals appeared periodically and had significant impact on the development of the history, becoming the driving force of it. In the newest history of Armenia that very person was Aram Manukyan (Sargis Hovhannisyan 1879-1919), the biggest national and political figure of 20th century, who is remembered as the founder of the First Republic of Armenia. This statement first of all refers to his activities in 1918, a fatal period for the nation of Armenia. Aram Manukyan, in fact, was the sole executive of Yerevan province, which occupied a considerable territory of Eastern Armenia. At the end of 1917, after the fall of Russian empire, Transcaucasia and Eastern Armenia were separated from Russian empire and were left alone against Turkey, giving the latter an opportunity to bring about its pan-Turkish objectives. One of the objectives was the occupation of Transcaucasia. Undoubtedly, it would include the genocide of the Armenians of Eastern Armenia as well. The urgent creation of powerful government and armed forces became a necessity. The fact that it was Aram who was entrusted with the leadership of Yerevan province in that critical period distinguishes him from other political figures of the time.

Aram, who can be characterized as a person of great endurance, unshakable will, decisiveness, consistency, prudence and strategic thinking, was able to get together skillful military leaders, political and social figures and organize new governmental bodies. With their help, he also created efficient military formations, suppressed Tatars' mutiny and anti-state activities, resolved many other vital problems during short period of time. In May, which was a fatal month, he played an important role in the organization of triumphant battles of Sardarabad and Aparan, which made the reshaping of the independence possible. Holding several offices in the government, Aram by all means contributed to the strengthening of the republic. Hence, he can be viewed as the founder of the First Republic of Armenia and a driving force of the history.

